ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻ ‘ՌՈՒՍՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ’ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

27.03.2014 11:27

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը մարտի 26-ին ընդունել է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան առաջին քարտուղար, ‘Ռուսհամագործակցություն’ Հայաստանի ներկայացուցչության ղեկավար Մարկ Կալինինին:

Հանդիպման ընթացքում Արա Զոհրաբյանը և Մարկ Կալինինը ներկայացրել են իրենց կողմից ղեկավարվող կառույցները, դրանց գործունեության ոլորտները, ինչպես նաև խոսել են կատարվող աշխատանքների և ապագա ծրագրերի վերաբերյալ: Կողմերը նախանշել են փոխգործակցության համար երկկողմանիորեն հետաքրքրություն ներկայացնող ոլորտները և ծրագրերը:

Հանդիպման վերջում համաձայնություն է ձեռք բերվել, որ ռուսական կողմը մասնակցելու է Փաստաբանների պալատի կողմից ծրագրվող հանրային իրավագիտակցության բարձրացմանն ուղղված այն ծրագրերին, որոնք առնչվելու են նաև Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին' մասնավորապես ռուսական համայնքին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })